

# ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ · ՊԱՏՄԱԿԱՆ · ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԹԻՒ Ժ· 1868 ԴԵԿՏԵՄԲԵՐ

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

### ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ԱՐԻՒԻՆԲ

Ինչպէս որ Ն. Վեհափառ կաթուղիկոսը Ս. Սինոդոս Ուսումնական յանձնաժողովոյ յանձնած էր ծխական՝ թեմական և վանական Ազգային հոգևոր դպրոցաց և վարժարանաց կարևոր և յարմար կարգադրութեանց կանոններ յօրինել, որ Ռուսաստանի իւրաքանչիւր վիճակներէն ու հոգևոր կառավարութիւններէն պատշաճ տեղեկութիւններ ստանալէ յետ, ահաւասիկ ծխական դպրոցաց կանոնները գըծագրած և աւարտած լինելով, ստորև կ'հրատարակենք օրինակը։

Իսկ միւս երկու թեմական և վանական վարժարանաց կանոններին · ևս անշուշտ յուսալով՝ որ քիչ ժամանակէն կը վերջանան, ամէնն ևս մի գրքի մէջ ամփոփեալ պէտք է տպուի հանդերձ այլ կարևոր բացատրութեանց հրահանգներով։